

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

<p style="text-align: center;">1. Ընդհանուր դրույթներ</p> <p>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Կադաստրի կոմիտեի կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) շուկայի վերլուծության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 61-25.7-Ղ42)</p> <p>1.2. Ենթակա և հաշվետու է Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:</p> <p>1.3. Ենթական և հաշվետու պաշտոններ Բաժնի պետին ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:</p> <p>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:</p> <p>1.5. Աշխատավայրը Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Արշակունյաց 7</p>
<p style="text-align: center;">2. Պաշտոնի բնութագիր</p> <p>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</p> <p>1. կազմակերպում է անշարժ գույքի գերատեսչական հաշվետվության ստուգման աշխատանքները.</p> <p>2. կազմակերպում է անշարժ գույքի գործարքների և քանակական տվյալների բազայի կազմման աշխատանքները.</p> <p>3. կազմակերպում է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և հողերի գնային վերլուծությունները.</p> <p>4. կազմակերպում է անշարժ գույքի շուկայի վերլուծական համառոտագրի կազմման աշխատանքները.</p> <p>5. մասնակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ անշարժ գույքի գնահատման ծառայությունների ոլորտում ազատականացման ծրագրի կատարմանը.</p> <p>6. կազմակերպում է անշարժ գույքի շուկայի զարգացման աջակցման վերլուծության համար անհրաժեշտ աշխատանքները.</p> <p>7. մասնակցում է անշարժ գույքի գործակալների գործունեության օրենսդրական կարգավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքներին.</p> <p>8. կազմակերպում է առցանց տրամադրվող տեղեկությունների հավաքագրման և մշակման աշխատանքները.</p> <p>9. կազմակերպում է հանրապետության քաղաքներում անշարժ գույքի գնագոյացման վրա ենթակառուցվածքների ազդեցության վերաբերյալ ուսումնասիրություններ.</p> <p>10. տրամադրում է կարծիքներ՝ գերատեսչությունների կողմից Կոմիտեի քնարկմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերին.</p> <p>11. մասնակցում է Կոմիտեի կողմից տարբեր ռազմավարական ծրագրերի մշակմանը և դրա համար անհրաժեշտ աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև անդամակցում է Կոմիտեի ղեկավարի և Կոմիտեի Գլխավոր քարտուղարի հրամաններով ստեղծված</p>

հանձնաժողովներին և աշխատանքային խմբերին.

12. կազմակերպում է շուկայական գնահատման ոլորտի բարելավմանը և ընդլայնմանն ուղղած աշխատանքները.

13. Վարչության պետին առաջարկություններ է ներկայացնում իր անմիջական ենթակայության տակ գտնվող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, նրանց նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու և խրախուսելու վերաբերյալ.

Իրավունքներ՝

- հանձնարարելու Բաժնի աշխատակցին մուտք գործել ARPIS էլեկտրոնային համակարգ և ներբեռնել գերատեսչական հաշվետվություն.

- Բաժնի աշխատակիցներից ստանալու անշարժ գույքի բազա.

- Բաժնի աշխատակիցներին ստանալու բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և հողերի գնային վերլուծությունները.

- Բաժնի աշխատակիցներին հանձնարարելու սահմանված ժամկետում համապատասխան մարմիններին համառոտագրեր տրամադրել.

- ստանալու համապատասխան մարմիններից տեղեկատվություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ անշարժ գույքի գնահատման ծառայությունների ոլորտում ազատականացման ծրագրի կատարման նպատակով.

- ստանալու համապատասխան մարմիններից տեղեկատվության տրամադրում անշարժ գույքի շուկայի զարգացման աջակցման վերլուծության համար անհրաժեշտ աշխատանքներ կազմակերպման նպատակով.

- ստանալու համապատասխան մարմիններից տեղեկատվություն անշարժ գույքի գործակալների գործունեության օրենսդրական կարգավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացման նպատակով.

- ստանալու Բաժնի աշխատակիցներից համապատասխան նյութեր առաջարկություններ ներկայացնելու, մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ պատրաստելու, նախագծերի, իրավական ակտերի և այլ փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություններ ներկայացնելու նպատակով.

- մուտք գործելու ARPIS էլեկտրոնային համակարգ առցանց տրամադրվող տեղեկությունների հավաքագրման և մշակման աշխատանքների կազմակերպման նպատակով.

- տեղում իրականացնելու և բաժնի աշխատակիցներից ստանալու տվյալների հավաքագրում անշարժ գույքի գնագոյացման վրա ենթակառուցվածքների ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման նպատակով.

- կարծիք տալ և հանդես գալ առաջարկությամբ գերատեսչությունների կողմից Կոմիտեի քննարկմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.

- իրականացնելու աշխատանքային խմբի գործառույթներից և լիազորություններից բխող աշխատանքներ՝ Կոմիտեի կողմից տարբեր ռազմավարական ծրագրերի մշակման և դրա համար անհրաժեշտ աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև Կոմիտեի ղեկավարի և Կոմիտեի Գլխավոր քարտուղարի հրամաններով ստեղծված հանձնաժողովներին և աշխատանքային խմբերին անդամակցման նպատակով.

- համապատասխան մարմիններին կատարելու անհրաժեշտ հարցումներ և ստանալու մասնագիտական կարծիքներ քաղաքացիների դիմումներին և հարցադրումներին համապատասխան ընթացք տալու նպատակով .

- ստանալու համապատասխան մարմիններից տեղեկատվություն անշարժ գույքի շուկայական գնահատման գործունեության վերաբերյալ փաստաթղթերի, արձանագրությունների,

հրամանների նախագծերի, ծանուցումների պատրաստման աշխատանքների կազմակերպման նպատակով.

- Վարչության պետին՝ ըստ անհրաժեշտության, իրավունք ունի ներկայացնել առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար, ինչպես նաև, նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

Պարտականությունները՝

- կազմակերպել անշարժ գույքի գերատեսչական հաշվետվության ստուգման աշխատանքները ARPIS էլեկտրոնային համակարգի օգնությամբ.
- կազմակերպել անշարժ գույքի ըստ տեսակների մուտքագրման, մշակման, տվյալների բազայի կազմման աշխատանքները SPSS ծրագրում.
- իրականացնել բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և հողերի վերլուծություն.
- կազմակերպել սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը և Կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն»-ին (Կոմիտեի կայք էջում տեղադրման նպատակով) համառոտագրերի տրամադրման աշխատանքները.
- մասնակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի քննարկումներին և հանդես գալ համապատասխան առաջարկություններով.
- կազմակերպել շուկայի զարգացման աջակցման վերլուծության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման, համադրման, փոփոխման միտումների ուսումնասիրման աշխատանքները.
- ուսումնասիրել անշարժ գույքի գործակալների գործունեության միջազգային փորձը և ոլորտի կարգավորման համար կատարել անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնությունների մշակումներ, ինչպես նաև հանդես գալ առաջարկություններով.
- սահմանված ժամկետներում Վարչության պետին ներկայացնել առաջարկություններ, պատրաստել մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ, ներկայացնել եզրակացություններ՝ նախագծերի, իրավական ակտերի և այլ փաստաթղթերի վերաբերյալ.
- կազմակերպել սահմանված ժամկետում սոցանց տրամադրվող տեղեկությունների բազաների էլեկտրոնային համակարգ ներբեռման աշխատանքները.
- կազմակերպել և իրականացնել անշարժ գույքի գնագոյացման վրա ենթակառուցվածքների ազդեցության վերաբերյալ տեղային ուսումնասիրությունների և տվյալների հավաքագրման աշխատանքներ.
- ուսումնասիրել համապատասխան գերատեսչության կողմից Կոմիտեի քննարկմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերը.
- ապահովել մասնակցություն՝ Կոմիտեի ղեկավարի և Կոմիտեի Գլխավոր քարտուղարի հրամաններով ստեղծված հանձնաժողովներին և խորհրդակցություններին որոնց անդամ է հանդիսանում.
- Ուսումնասիրել քաղաքացիների դիմումներն ու հարցադրումները.
- կազմակերպել անշարժ գույքի գնահատման գործունեության վերաբերյալ փաստաթղթերի, արձանագրությունների, հրամանների նախագծերի, ծանուցումների աշխատանքները.
- կազմակերպել որակավորված գնահատողների դաշտի կարգավորման հայեցակարգի մշակման աշխատանքներ.
- սահմանված ժամկետներում Վարչության պետին ներկայացնել Վարչության աշխատանքային ծրագրերը.
- աշխատանքի բարդությունից և անհրաժեշտությունից ելնելով՝ Վարչության պետին առաջարկություններ ներկայացնել Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի քննազավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պետական կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարման կամ մաթեմատիկայի կամ ճարտարագիտության քննազավառում չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև պատվիրակված լիազորությունների շրջանակներում մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառնություններից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ